ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60,էլ հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA#

#
#
02.11.2016թ
305-ի 7

ՀՀ տարածքային կառավարման և
զարգացման նախարար
պարոն Դավիթ Լոքյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Լոքյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների երկրորդ ծրագրի իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի տասնմեկերորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2016 թ.-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ 20.000 և ավելի բնակչություն ունեցող քանի՞ համայնքում է ներդրվել ավագանու նիստերի առցանց հեռարձակումը: Խնդրում ենք տրամադրել համայնքների անվանական ցանկը և համապատասխան առցանց հղումները:
2. 2016 թ.-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ 20.000 և ավելի բնակչություն ունեցող քանի՞ համայնք է իրականացրել հանրային քննարկումների ու ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակումը: Խնդրում ենք տրամադրել համայնքների անվանական ցանկը և համապատասխան առցանց հղումները:
3. 2016 թ.-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ քանի՞ 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքեր են ստեղծվել `հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ: Խնդրում ենք տրամադրել համայնքների անվանական ցանկը և համապատասխան համացանցային հղումները:
4. Որքա՞ն գումար է ծախսվել ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու տեխնիկասարքավորումների գնման, եղած կայքերի վերազինման կամ ստեղծման համար 20.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համար և ի՞նչ միջոցներից /պետական բյուջե, դրամաշնորհներ կամ այլ/: Խնդրում ենք տրամադրել տեխնիկասարքավորումների գնման գործընթացին վերաբերող փաստաթղթեր՝ պայմանագրեր, գնված սարքավորումների ցանկը:
5. Որքա՞ն գումար է ծախսվել 20.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքերիի ստեղծման համար: Խնդրում ենք տրամադրել համապատասխան կայքերի ցանկը և հղումներ:

6. Քանի՞ դասընթացներ են կազմակերպվել համայնքների համապատասխան աշխատակիցների համար: Խնդրում ենք տրամադրել անվանական ցանկը:
7. Եթե լիարժեքորեն չեն իրականացվել ԲԿԳ երկրորդ Գործողությունների 11-րդ հանձնառության գործողությունները, ապա, խնդրում ենք նշել դրանց ավարտին հասցնելու վերջնական ժամկետները և դրանց իրականացմանն ուղղված ընթացիկ աշխատանքները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Լիանա Դոյդոյան
ԻԱԿ նախագահ